Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 12

Վանաձորի համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 23.12.2015թ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ս.Դարբինյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ՝ Գ.Քալանթարյանը, Ս.Ղամբարյանը, Ս.Աղաբեկյանը, Ա.Հարությունյանը, Գ.Շահինյանը, Հ.Մովսիսյանը, Կ.Պառավյանը, Ա.Օհանյանը, Ա.Մատինյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Դավիթավյանը, Ա.Ափինյանը, Դ.Սիմոնյանը, Ա.Խաչատրյանը:

Հարգելի պատճառով նիստից բացակայում էին ավագանու անդամներ Ս.Հակոբյանը, Վ.Դոխոյանը, Ա.Փելեշյանը,Ա.Այվազյանը, Խ.Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին Ն.Սարդարյանը, Գ.Սիմոնյանը, Է.Հովսեփյանը, Ա.Ավագյանը, Ա.Իսպիրյանը, Է.Գևորգյանը, Մ.Գասլստյանը, Տ.Պապանյանը, Լ.Մելիքյանը, Գ.Պառավյանը, Գ.Մացակյանը, Գ.Բադյանը, Լ.Ստեփանյանը, Տ.Գրիգորյանը, Վ.Սահակյանը, Է.Արզումանյանը, ԶԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը, նրա մեջ ներառելով նաև լրացուցիչ ներկայացված օրակարգային հարց՝ «Աղբահանության իրականացման կարգի, աղբահանության դրույքաչափերի աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների (կոնտեյներների) տեղադրման վայրերը, դրանց տեսակը և քանակը սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 16-ի թիվ 63 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»՛ որոշման նախագիծը:

Ավագանու անդամներ Ա. Մատինյանը և Ա. Խաչատրյանն առաջարկեցին առանձին - առանձին քննարկել և քվեարկել օրակարգային առաջին հարցի այն երեք կետերը, որտեղ կատարվել են փոփոխություններ և այնուհետ շարունակել աշխատանքն ըստ կարգի:

Մտքերի փոխանակությունից հետո նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը, լրացումով, որ առանձին - առանձին կքննարկվի և կքվեարկվի օրակարգային առաջին հարցի այն երեք կետերը, որտեղ կատարվել են փոփոխություններ:

Առաջարկությունը դրվեց քվեարկության;

Քվեարկությամբ՝ կողմ՝ 14, դեմ՝ 0 առաջարկն ընդունվեց:

Միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օ ր ա կ ա ր գ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

   զեկ.՝ Է.Գևորգյան
2. Վանաձորի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին

   զեկ.՝ Ա.Ավագյան
3. Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Վանաձորի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 58-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

   զեկ.՝ Ա.Ավագյան
4. «Վանաձորի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին

   զեկ.՝ Գ.Մացակյան

5. Տիգրան Վասակի Կիրակոսյանի ընտանիքին բնակարան հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

6. Արտյոմ Գևորգի Սմբատյանի ընտանիքին բնակարան հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

7. «Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում դիոլի, կերպարվեստի և պարարվեստի խմբակներ բացելու համաձայնություն տալու և վարձավճարի չափը սահմանելու մասին

զեկ.՝ Գ.Բաղյան

8. «Աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

9. Վանաձորի համայնքի ղեկավարի և «Կոմունսերվ» ՍՊԸ-ի միջև 2011թվականի հունվարի 25-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության թիվ 11 պայմանագիրը լուծելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

10. Աղբահանության իրականացման կարգի, աղբահանության դրույքաչափերի աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների (կոնտեյներների) տեղադրման վայրերը, դրանց տեսակը և քանակը սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 16-ի թիվ 63 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ն.Սարդարյան

1.ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ.՝ Է.Գևորգյան

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում և ավագանու անդամների կողմից բարձրացված հարցերին պատասխանեց նաև քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժի պետ Մարինե Գալստյանի կողմից:

Արթուր Օհանյանն առաջարկեց ընդհանրապես հանել Հավելված 1-ի 13-րդ կետը օրակարգի առաջին հարցից:

Գայանե Քալանթարյանն առաջարկեց Հավելված 1-ի 13-րդ կետով նախատեսված ավտոկայանատեղերի համար սահմանել 0 դրույքաչափ

ա/ Առաջինը քվեարկության դրվեց Գ. Քալանթարյանի առաջարկը:

Քվեարկությամբ՝ 3 կողմ /Ս. Ղամբարյան, Գ. Քալանթարյան, Ս. Աղաբեկյան / դեմ՝ 11 , առաջարկը չընդունվեց:

բ/ Քվեարկության դրվեց Արթուր Օհանյանի առաջակը՝ հանել 13-րդ կետն ամբողջությամբ:

Քվեարկությամբ՝ կողմ 11 , դեմ՝ 1 / Ս.Ղամբարյան/՝ առաջարկն ընդունվեց:
Քվերակությանը չմասնակցեցին Գ. Քալանթարյանը և Ս. Աղաբեկյանը

գ/ Քննարկվեց 5-րդ տողի բ/ ենթատողը:
Քնարկումների ընթացքում այդ տողը որոշվեց թողնել անփոփոխ:

Քվեարկությամբ կողմ՝ 11, դեմ՝ 3 /Գ.Շահինյան, Ա.Ափինյան, Ս.Ղամբարյան/՝ առաջարկն ընդունվեց:

դ/ Քննարկվեց 8-րդ տողը:
Առաջարկվեց Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության տուրքը սահմանել 0 դրամ:

Քվեարկությամբ կողմ՝ 7 , դեմ՝ 1 ձեռնպահ՝ 1/ Ա.Խաչատրյան/ առաջարկն ընդունվեց:

Ավագանու անդամ Ա.Օհանյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չմասնակցեց ավագանու նիստին:

ե/ Քննարկվեց Հավելված 2-ի 4-րդ տողը:
Արտահայտվեցին ավագանու անդամներ Ա.Մատինյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Դավիթավյանը, Գ.Քալանթարյանը: Ա.Գրիգորյանը խնդրեց պարզաբանում մտցնել աղբահանության վճարը բարձրացնելու նպատակը: Ս.Դարբինյանը պատասխանեց, որ ավելացված գումարներով կգնվեն լավորակ մեքենաներ, աղբահանությունը ավելի կբարելավվի:
Քվեարկությամբ՝ 9 կողմ, 4 դեմ /Ա.Մատինյան,Գ. Շահինյան, Վ. Դավիթավյան,Ա. Խաչատրյան./ տողը որոշվեց թողնել անփոփոխ:

զ/ Քննարկվեց Հավելված 2-ի 5-րդ տողը:
Բացատրվեց, որ վրիպակ է եղել: Ընդունվեց ի գիտություն

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:

Առաջարկվեց քվեարկել օրակարգի 1-ին հարցն ամբողջությամբ :
Քվեարկությամբ՝ կողմ՝ 11, դեմ՝ 1 /Ա.Մատինյան/, ձեռնպահ՝ 2 /Ա.Խաչատրյան, ՎԴավիթավյան/ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

2.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին

զեկ.՝ Ա.Ավագյան

Ավագանու անդամ Վ.Դավիթավյանը դուրս եկավ նիստերի դահլիճից և այլևս չմասնակցեց ավագանու նիստին:

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

3.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Վանաձորի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 58-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Ա.Ավագյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

4.ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

5.ԼՍԵՑԻՆ - Տիգրան Վասակի Կիրակոսյանի ընտանիքին բնակարան հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

6.ԼՍԵՑԻՆ - Արտյոմ Գևորգի Սմբատյանի ընտանիքին բնակարան հատկացնելու մասին

զեկ.՝ Գ.Պառավյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

7.ԼՍԵՑԻՆ - «Վանաձորի Կոմիտասի անվան արվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում դիոլի, կերպարվեստի և պարարվեստի խմբակներ բացելու համաձայնություն տալու և վարձավճարի չափը սահմանելու մասին

զեկ.՝ Գ.Բաղյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

8.ԼՍԵՑԻՆ - «Աթլետիկայի օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճը վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

9.ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ղեկավարի և «Կոմունսերվ» ՍՊԸ-ի միջև 2011 թվականի հունվարի 25-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության թիվ 11 պայմանագիրը լուծելու մասին

զեկ.՝ Ա.Իսպիրյան

Բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պարզաբանումներ:
Առաջարկվեց քվեարկել օրակարգի հարցը:
Միաձայն կողմ քվեարկությամբ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

10.ԼՍԵՑԻՆ - Աղբահանության իրականացման կարգի, աղբահանության դրույքաչափերի աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների (կոնտեյներների) տեղադրման վայրերը, դրանց տեսակը և

քանակը սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 16-ի թիվ 63 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ն.Սարդարյան

Բարձրացված հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 10, ձեռնպահ՝ 2 /Ա.Խաչատրյան, Ա. Մատինյան/ ընդունվեց որոշում /որոշումը կցվում է/:

Նիստն ավարտվեց: